ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 14

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր (Վանաձոր քաղաք, Գուգարք, Դարպաս, Շահումյան բնակավայրերը), Լերմոնտովո (Լերմոնտովո, Անտառաշեն բնակավայրերը) և Ֆիոլետովո համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր (Վանաձոր քաղաք, Գուգարք, Դարպաս, Շահումյան բնակավայրերը), Լերմոնտովո (Լերմոնտովո, Անտառաշեն բնակավայրերը) և Ֆիոլետովո համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-1 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին:

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր (Վանաձոր քաղաք, Գուգարք, Դարպաս, Շահումյան բնակավայրերը), Լերմոնտովո (Լերմոնտովո, Անտառաշեն բնակավայրերը) և Ֆիոլետովո համայնքների ղեկավարներին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Լոռու մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. ՀՀ Լոռու մարզպետին, Վանաձոր (Վանաձոր քաղաք, Գուգարք, Դարպաս, Շահումյան բնակավայրերը), Լերմոնտովո (Լերմոնտովո, Անտառաշեն բնակավայրերը) և Ֆիոլետովո համայնքների ղեկավարներին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «12» «օգոստոսի» 2024թ.